



MILLENNIUM
CHALLENGE CORPORATION
UNITED STATES OF AMERICA

**MILLENNIUM CHALLENGE
ACCOUNT - ARMENIA**



Համագործակցություն՝ հանուն մաքուր ոռոգման ջրի

Նորաբացը Արարատյան հարթավայրի գյուղերից է, որն ունի շուրջ 2000 բնակիչ: Առավելապես հողագործությամբ զբաղվող այս մարդիկ մշտապես ոռոգման ջրի մատակարարման խնդիրներ են ունեցել՝ ստիպված լինելով հրաժարվել մի շարք ջրասեր բույսերի, մասնավորապես՝ բանջարեղենի մշակումից: Երբ Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ (ՀՄՀ) – Հայաստան ծրագիրը հայտարարեց համայնքների ներտնտեսային ջրանցքների վերականգնման բաղադրիչի մասին, գյուղապետ Գալուստ Գալստյանը առաջիններից մեկը եղավ, ով փորձեց իր ղեկավարած համայնքն ընդգրկել ՀՄՀ-Հայաստան ծրագրում՝ 15% համաֆինանսավորմամբ մասնակցելով ջրանցքի շինարարությանը: Համայնքի նման ներգրավվածությունը



Արևոտի Էկո-ակումբի ասները և Նորաբացի բնակիչները:

«Մենք կառուցում ենք, մենք բարեկարգում ենք» կարգախոսի ներքո կազմակերպված այս միջոցառումը նպատակ ունեցրեց ընդգծել ինչպես ՀՄՀ-Հայաստանի կողմից իրականացվող ենթակառուցվածքների վերականգնման, այնպես էլ բնապահպանական գործողությունները, կարևորել կանաչ տարածքների ընդլայնումը և ջրանցքների աղտոտման վնասները, ինչպես նաև շարքային քաղաքացիների դերը այս գործում: Նշանավորելով ՀՄՀ-Հայաստանի և շահառու համայնքի հաջող համագործակցությունը՝ միջոցառման ավարտին ՀՄՀ-Հայաստանի Գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը և Նորաբացի համայնքապետ Գալուստ Գալստյանը հուշագիր ստորագրեցին տնկված ծառերի հետագա պահպանության իրականացման վերաբերյալ:



հանդիսանում է ծրագրի պահանջ, որի միջոցով ձևավորվում է պատասխանատու վերաբերմունք համայնքային ենթակառուցվածքի և դրա հետագա պահպանման հանդեպ:

Ապրիլի 10-ին ազդարարվեց համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցի 550 մետրանոց մի հատվածի նորոգման ավարտը (ընդհանուր առմամբ ՀՄՀ-Հայաստանը Նորաբացում կվերականգնի 2700 մետր ջրագիծ): Բայց սա դեռ ամենը չէ, ինչով ՀՄՀ-Հայաստանը օգնեց Նորաբացին. ջրանցքին հարող տարածքի մաքրումը սանիտարական աղբից և դրա երկայնքով 150 ծառի տնկումը մեծ ոգևորությամբ ընդունվեց ինչպես համայնքի բնակիչների, այնպես էլ ՀՄՀ-Հայաստանի և նրա գործընկերների կողմից: Միջոցառմանը իրենց ակտիվ մասնակցությունն ունեցան ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի աշխատակազմը, ներկայացուցիչներ շինարարության կապալառու հանդիսացող «Երևանշին» ՍՊԸ-ից, Ջրից դեպի շուկա բաղադրիչն իրականացնող ԷյՍԵԻԱԵ-ՎՕԿԱ կազմակերպությունից, ԱՄՆ դեսպանատնից, ՀՄՀ ներկայացուցչությունից, Խաղաղության կորպուսից, Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման ՀԿ-ից,

Արմավիրի, Արարատի և Վայոց Ձորի մարզերի 14 համայնքում ՀՄՀ-Հայաստանի ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի շրջանակներում ներկայումս ընթանում են ոռոգման ներտնտեսային ջրանցքների վերականգնման աշխատանքներ: Նորաբացը առաջինն էր, որտեղ արդեն նորոգված ջրանցքում բաց թողնվեց ոռոգման ջուրը: Նախատեսվում է, որ նշված համայնքներից շատերը այս ոռոգման սեգոնի ընթացքում արդեն իսկ կօգտվեն նոր ջրանցքներից:

Այս համայնքի ներտնտեսային ցանցի վերականգնումը ԱՄՆ կառավարության 180 միլիոն դոլարի ներդրումային ծրագիրն իրականացվող ՀՄՀ-Հայաստանի մի փոքր մասն է: Ծրագրի նպատակն է աղքատության հաղթահարումը գյուղատնտեսության ոլորտում ներդրումներ կատարելու միջոցով, որի շրջանակներում կվերականգնվեն նաև մի շարք խոշոր ենթակառուցվածքներ. 17 պոմպակայան, 5 ինքնահոս համակարգ, 40 կիլոմետր մայր ջրանցք, 250 կիլոմետր ներտնտեսային ջրանցք, Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգը:

